



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Արտաշես Լալայանը, Վալոդյա Խոջայանը, Արտյոն Յակոբովը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սուսաննա Ալեքսանովա, Ռադիկ Բենյամինով, Տոմա Իվանովա, Սուրեն Միխայլով,
Զաիր Նադոյան, Դավիթ Վանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ֆելիքս Միրզոբեյլը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նելլի Հարությունյանը

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՅԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի
6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 18-ի N 11 հերթական
նիստի օրակարգը՝

1) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային
նշանակությունը փոփոխելու մասին :

2) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային
նշանակությունը փոփոխելու մասին:

3) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում գտնվող 16-րդ փողոց 4-րդ և 5-րդ
նրբանցքներին անվանում տրամադրելու մասին :

- 4) « Հայաստանի Արևելքի Ասորական Կաթողիկոսության Սուրբ Առաքելական » եկեղեցուն դրամական աջակցություն տրամադրելու մասին :
- 5) « ԳԱԲԱԲԱ » ասորական երիտասարդական ՀԿ -ին դրամական աջակցություն տրամադրելու մասին :
- 6) Հողամասում առկա ինքնակամ կառուցված շինությունը օրինական ճանաչելու , հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու մասին :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐՁՈՒԵՎ/

Համաձայն հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի , 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի , համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 42-րդ կետերի և հիմք ընդունելով Կառլեն Միխաիլի Արզումանովի դիմումը.

Համայնքի ավագանին որոշում է .

1.Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող , Կառլեն Միխաիլի Արզումանովին սեփականության իրավունքով պատկանող 07-016 -0319-0092 կադաստրային ծածկագրով , 0.06038 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության , ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների , իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սահմանել , որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները

պետական գրանցում ստանալուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՅՈՒ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի , 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի , համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 42-րդ կետերի և հիմք ընդունելով Կարեն Ռազմիկի Նիկոյանի դիմումը.

Համայնքի ավագանին որոշում է .

1.Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող , Կարեն Ռազմիկի Նիկոյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016-0221-0017 կադաստրային ծածկագրով , 0.208978 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հնդավոր հողամասի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության , ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների , իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սահմանել , որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81/

Լսեցին

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 16-ՐԴ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ԵՐԲԱՆՑՔՆԵՐԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող 16-րդ փողոց 4-րդ և 5-րդ նրբանցքներին տրամադրել անվանում՝ ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի համայնք 16-րդ փողոց 4-րդ, 5-րդ նրբանցք՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետկետի և հիմք ընդունելով Հայաստանի Արևելքի Ասորական Կաթողիկոսության Սուրբ Առաքելական եկեղեցու 21.10.2024 թվականի թիվ 24 գրությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Արևելքի Ասորական Կաթողիկոսության Սուրբ Առաքելական եկեղեցուն տրամադրել 500000 / հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական աջակցություն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83/

Լսեցին
ԳԱԲԱՐԱ ԱՍՈՐԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ-ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետկետի և հիմք ընդունելով « ԳԱԲԱՐԱ » ասորական երիտասարդական ՀԿ-ի 25.10.2024 թվականի գրությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

- 1.« ԳԱԲԱՐԱ » ասորական երիտասարդական ՀԿ-ին տրամադրել 500000 / հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական աջակցություն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84/

Լսեցին
ՀՈՂԱՄՄՍՈՒԾ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ , ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3,33,34 և 35-րդ կետերի պահանջների, «ԳՆԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ » ԱԶ- ի կողմից 30.10.2024 թվականին կազմված հաշվառման / Չափագրման / տվյալների մուտքագրման տեղեկանքի՝ մուտքագրման ծածկագիր՝ 20245TLLBF/.

Համայնքի ավագանին որոշում է՝

- 1.ՀՀ Կոտայքի մարզի , Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-016-0304-0014-ից, 07-016-0304-0020-ից կադաստրային ծածկագրով , 0.24677 հա մակերեսով արդյունաբերական , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության , գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասումինքնակառուցված անասնաշենք – 519.5քմ , ծածկ – 320.5 քմ / ընդհանուր արտաքին մակերեսը՝ 840.0 /արտաքինմակերեսովհամարելօրինականսճանաչել հանայնքային սեփականություն:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 85/

Ավագանու անդամներ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՈՎԱ

ՌԱԴԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՈՎ

ՏՈՄԱ ԻՎԱՆՈՎԱ

ՍՈՒՐԵՆ ՄԻԽԱՅԼՈՎ

ԶԱԻԼ ՆԱԴՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՎԱՆՅԱՆ

[Handwritten signatures in blue ink corresponding to the names above]

Համայնքի ղեկավար

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒԿ

[Handwritten signature in blue ink]

Նիսի արձանագրեց՝ Նելլի Հարությունյանը



[Handwritten signature in blue ink]